


ՏԵՐԵՆ-ԽԱՐԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱՀԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲՈՒ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզիպտոսի համար տրեկին. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախսը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեանը ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր

ԿՐԹԱԿԱՆ ՈՒԺԵՐ

Ի ժրնէվ «Պուլվար տէ ֆիլոզոֆ» ծա-
ռուղիին թիւ 8 չէնքին մէջ հաստատուած է
Պէրպէրեան վարժարանի հիմնադիր-անօրէն,
1896 չոյեմբեր 1էն ի վեր, ուր կընդունի հայ
պատանիներ, նախնական կամ երկրորդա-
կան, արհեստական կամ առեւտրական կըր-
թութեան աշակերտող, ստանձնելով անոնց
նիւթական և բարոյական կենաց ու զարգաց-
ման խնամքն ու հսկողութիւնը:

Պոլիսէն Զուիցերիա միջավայրը, կեանքի
պայմանները, մտաւորական զարգացումը, ան-
դորրութիւնը, ամեն բան տարբեր են ու շա-
ւաղոյն, բնականաբար. հիմակ, առաւելու-
թիւնը կրկին է ուրեմն այն ծնողքներուն հա-
մար որոնք առողջ դաստիարակութիւն մը տալ
կուզեն իրենց զաւակներուն. Եւրոպայի ամե-
նէն աւելի առաջացած կեդրոններէն մէկը
կրնան զրկել զանոնք, ու միանգամայն օտար
ձեռքերու մէջ չի թողուլ:

Տիար Ռ. Պէրպէրեանի գովեստն ընելու
պէտք չունինք. ինքը ծանօթ է ազգին մէջ իր-
բեւ ուսուցիչ, իբրեւ գրագէտ և իբրեւ դպրոցի
վարիչ. իր հմտութեան ու փորձառութեան
կը միացունէ ընտանեկան մաքուր միջնորդա-
մը որուն մէջ իր սաներ ծնողական յարկէն հե-
ռացած չի պիտի նկատեն ինքզինքնին՝ օտար
հողի վրայ. կերպով մը իրենց տան մէջ գլու-
նուած պիտի ըլլան: Յետոյ, եւրոպական կըր-
թութիւն մը առնելով հանդերձ, զուրկ չի
պիտի մնան ազգային դաստիարակութենէ:

Զենք ուղեր խօսիլ այդ հաստատութեան
պայմաններուն, Զուիցերիոյ առողջ կլիմային
և ուսման տեսակէտով ընծայած առաւելու-
թիւններուն վրայ. հետաքրքրուող հայրերն ու
մայրերը կրնան գիտնալ: Յայտարարութիւն
մը չէ որ կը հրատարակենք, այլ շերմագին
յանձնարարութիւն մը՝ գիտակցութեամբ և
համոզմամբ: Ուսանողք պիտի բնակին Պէր-
պէրեան հաստատութեան մէջ, իրենց կրթու-
թիւնը ստանալով քաղաքին պետական կամ
մասնաւոր վարժարանաց մէջ ուր Տնօրէնու-
թիւնը կը զետեղէ զիրենք՝ իրենց կարողու-
թեան և իրենց ծնողաց փափագին համա-
ձայն: Առաջին անգամն է, եթէ չենք սխա-
լիր, որ այս տեսակ գիւրութիւն մը կընծայ-
ուի հայ պատանիներուն առջեւ, գիւրութիւն
մը ուսկից կրնան օգտուիլ նոյն իսկ որբերու

պաշտպանութիւնն ստանձնող բարերարներ,
անհատաբար կամ հաւաքաբար:

Պոլսոյ վերջին աղետալի գէպերէն ետք,
երբ քայքայուեցան նաև վարժարաններ, տար-
աընեցան մտաւորական ուժեր, ու կոտորա-
ծին սարսափը դարձաւ ըրաւ գրեթէ ամ-
բողջ ժողովուրդ մը, հալածուած՝ փախստա-
կան հայուն առաջին մտածումներէն մէկը
պէտք է ըլլայ, հացի խնդիրն հետ, դաստի-
արակութեան գործը, նոր սերունդի ապա-
գան: Երէկ Կիպրոսի Որբանոցին հրաւերը կը
հրատարակէինք, այսօր ժրնէվի Պէրպէրեան
հաստատութիւնը կը յանձնարարենք, վաղը
պիտի փափագէինք կրթական նոր յարկի մը
լացումը աւետել, ամենքն ալ աղտաւ ու բեղմ-
նաւոր հողի վրայ պատրաստուող պարտէզներ
ու շերմանոցներ՝ ուր պիտի աճին ուճանան
վաղաժարչամբ բոյսերն ու արեւահար ծաղիկ-
ներն, — մեր մանուկները:

Հետաքրքրուինք, համակրինք անոնց ու
օգտուինք անոնցմէ. կարողութեան աէր ծը-
նողքներուն ու առատաձեռն պաշտպաննե-
րուն համար՝ գնահատելի գիւրութիւն մըն է
որ կ'ընծայուի: Մեր կրթական ուժերը ժող-
վելու, արդիւնաւորելու մեծագէտ պիտի նը-
պաստեն այդ անհատական ձեռնարկութիւն-
ներ որոնք հաւաքական բարիքի մը նախա-
քայլն ըլլալ կը խոստանան:

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Ճիւղի պէս ասնճարճակ, ահառո իր օձա-
ձեւ գնացիին մէջ, անգործէն կը վագէ կանց-
նի, մահ ափռելով իր յորս դին, ճամբուն
վրայ ձգելով արիւնայի շաւիղ մը, եւ որուն
ի տես չի կասիր, լանդրադառնաւ, չի ահա-
բեկիր, հակառակ արիւնին ամենէն կարծ-
րասիրս ռճագործներուն վրայ ըրած ազ-
դեցութեան:

Ոչ սիրս եւ ոչ խիղճ ունեցող մարդաս-
պանը օրն ի քուն իր մահաափիռ գործը
կը կատարէ: Այսօր գրուի մը կը ջախջախէ,
վաղը ամբողջ մարմին մը. վայրկեանի մը
մէջ կայրիացնէ դեռասի կիւնը. մօրք գոր-
գորանիէն կը յափշտակէ զաւակը, ժիր պա-
սանին պաղ, անճանայ դիակ մը կը դառ-
նայ անոր վագիկն ցակ. քայց ինք կանցնի
սրաւշաւ եւ անվախ պաղարիւնութեամբ մը՝
որ դահիճներուն եւ գովելի յաւկոթիւնն է:

Անոր համար ոչ պատիւ կայ եւ ոչ ալ

խղճի խայթ՝ պատիւներու եւ տակալին:

Մարդկային ընկերութիւնը կը պարծի
անով, զայն մէջեղ հանդիմանը կանմահա-
նան, եւ շատեր անով կը հարսանան:

Ուղիղ գծի վրայ ընթացող այդ անող-
դայ ռճագործը չի պահուրսիր, չի ամնար,
չի վախնար, իմ կեանքս, ձերք, ամենուսը
անոր համար նշանակութիւն չունեցող քան
մըն է, յարժեք որ անոր վրայ խորհի եւ
գրադի անով:

Բժիշկներու նման՝ իր մահաափիռ գոր-
ծին պատասխանատու չէ, բաւական է որ
սակը վճարած ըլլան:

Դեռ անցեալ օր, դեռ երէկ կեանք
ու՛րդ խղեց այդ դարավերջիկ եւ անողորմ
մեհենան: Բայց ո՞վ բռնեց անոր օձիքն,
ո՞վ կատեցոց, ո՞վ հարցախնեց:

Ոչ ոք:

Եւ քող տուի որ իր ճամբան շարու-
նակէ, անցնի, երբայ:

Եւ ինչո՞ւ այս անհրաւիրութիւնը:

Անոր համար որ եղեկսրականութիւնը՝
0/0 15 կամ 20 տոկոս քերող զօրութիւնն է
այսօր:

Թող տոնք որ Թրամվէյը անցնի.....

Բարոյական. — Պէճիզացիները հարսա-
նալու համար պէտք է որ Եզիպտացի մեհենին:

Կ. ՊՕԼՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպական վերջին Սուրհանդակի բերած լու-
րերուն նոյնքով, Կ. Պոլսոյ մէջ մտահոգութիւնը
կը շարունակէ տիրել տակալին: Վերջերս ձերբա-
կալուեր են բժշկական քանդակներ թուրք ուսանող-
ներ ու վարժարանին տնօրէնները, որոնք գիւնտրա-
կաններ են: Աւելի բան չորս ամիս հետէ ձերբա-
կալուածներուն մէջ կան՝ առեւտրական և հանրօ-
գուտ գիւնտրեանց նախարարութեան բարձրագոյն
պաշտօնատարներէն Սաատի պէյ, Պետական խոր-
հրդոյ անդամ Քէմալ պէյ, «Յիշատակագիր առ
Սուլթան» ֆրանսերէն տետրակին հեղինակը և ուրիշ
շատեր: Այս ձերբակալութիւններու շարժումիւ կը
նկատուին Ժէօն-Թիւրքի կուսակցութեան արարքները,
իրական կամ ենթադրական: (Մ. Խ. — Եւրոպայի
թղթակցներու լուրերը հերքելու յուսկնութիւն
չունինք. զիտեւ պիտի տանք միայն թէ, իրողութեան
համապատասխանե՞լ հետի են երբեմն. այսպէս, երբ
Սաատի պէյը իբրեւ բանտարկեալ մը կը ցուցնէին,
անդին՝ Պոլսոյ մէջ պաշտօնապէս կը ծանուցուէր թէ
«Ուրֆայի կարավարիչ անուանեցաւ՝ առեւտրական
և հանրօգուտ շինութեանց պաշտօնատան հաշուակալ
Սաատի պէյ»:

— Նախկին Մեծ-Եպարքոս Ճէվաթ փաշա, ու
րուն Քանտիայի գիւնտրական հրամանատար անուան-
ուին հեռագիրը ծանուց արդէն, յուլիս 15ի իրկու-

նը յանկարծական կերպով մեկներ է Կ. Պոլսէն՝ կրե-
տէ ուղեւորներու համար, առանց դեպքաններուն զի-
տուածան : Այս լուր բաւական իրարանցում պատ-
ճառեր է ծովակալներուն : Թայմզին թղթակիցը
կրէ թէ ձգվաւ փաշայի յանձնուած պաշտօնը կրնայ
սակայն յանդուգն փորձ մը բլլալ՝ կրէտական խնդ-
րին լուծումը փութացնելու համար :

—Վիեննայէն կը հեռագրեն Տէյլի Թէլիգրաֆին
որ եթէ Սուլթանին՝ եւրոպական Տէրութեանց փա-
փագին համակերպելուն հետեւանօք խոռովութիւններ
ծաղին ի Կ. Պոլիս , դեսպանատանց պահականաւորը
կարող են 5000 ծովային զինուոր ցամաք հանել
մէջ ժամուան մէջ : (1896 օգոստոս 14ի և 15ի կու-
տորածներուն ատեն խելքերնին կամ խիզճերնին
ուր էր)

—Թուրքիոյ և Ռումանիոյ միջեւ դաշնակցու-
թիւն մը կնքուած ըլլալու լուրը կը հերքուի Կ. Պոլ-
սէն : Այս դաշնակցութեան համար ըսուեցաւ թէ
նպատակ ունի ռումանական կառավարութեան ա-
ջակցութիւնն աստիճանով օսմ. կառավարութեան ,
եթէ Պուլկարիոյ կողմէ շարժում մը տեղի ունենայ :
Այս լուր ծագում առեր է Կ. Պոլսոյ ռումանական
դեսպան Պ. Ճովարային Ա. կարգի Օսմանիէ պատ-
ռանշան նուիրակէն, որուն շարժումը թիւն է, սակայն,
առեւտրական դաշնագրի մը կնքումը ինչպէս նաեւ
հեղինական պատերազմին ատեն Թուրքիոյ բուժ-
վարքներուն հանդարտ մնալը :

—Պաշտօնապէս հաստատուեցաւ Սթոքհոլմի
ռուս դեսպան Պ. Չինովիէֆի Կ. Պոլսոյ դեսպան
անուանուիլը Պ. Նէլիտօֆի տեղ որ Հոռոմ կը փո-
խադրուի : Պ. Չինովիէֆի համար կըսուի թէ խիստ
և կտրուկ քննադրութեան տէր անձ մըն է . բաւա-
կան ժամանակ ծառայած է Ռուսիոյ արտաքին գոր-
ծոց նախարարութեան ասիական ճիւղի պաշտօնա-
տան մէջ և եղած է նաեւ Թէհրանի դեսպան :
Պ. Նէլիտօֆ Կ. Պոլսոյ ռուսական դեսպանութիւնը
կը վարէր 1882էն ի վեր :

—Կ. Պոլսոյ թերթերէն քաղուած .
«7 յուլիս (Ն. Տ.) չորեքշաբթի . Մալիւմաթ
լրագիրը պատուէրներու անաստած ըլլալով, ե-
պարքոսական հրամանաւ դադարման դատաստար-
ուեցաւ :

«12 յուլիս (Ն. Տ.) երկուշաբթի. Ամենօրեայ և
պատկերազարդ Մալիւմաթ լրագրոյ արտօնատէրն
ապօրէն և ըմբոստ ընթացքի մէջ գտնուած ըլլալով,
իր լրագիրն եպարքոսական հրամանաւ խափան-
ուեցաւ :

«13 յուլիս (Ն. Տ.) երեքշաբթի. Մալիւմաթ
լրագիրն որ երէկ խափանուեցաւ եպարքոսական
հրամանաւ, երէկ նորէն հրատարակուիլ սկսաւ կայս-
իրատէով :»

—Յոյն հրապարակագիրներն ալ իրենց աշխա-
տութեան կեդրոնը Վոսիտրի ամերէն հեռացնելու
հարկին մէջ կը գտնուին , սա տարբերութեամբ որ
անոնք իրենց հայրենի հողին վրայ կը հաստատուին :
Այսպէս, Կ. Պոլսոյ յունական հետադոյն թերթը,
Նեօլոգոս , որ երեսուցամէկ տարիէ ի վեր կը հրա-
տարակուէր հոն , Աթէնք փոխադրուեց է ուր պիտի
շարունակուի դարձեալ Պ. Վոսիտրի խմբագրու-
թեամբ որուն պիտի աշխատակցին նշանաւոր յոյն
հրապարակագիրներ :

ԲԱՍՊԱԿԻ ՈՐԴԵՐԸ

(ԳԻՏԱԿԱՆ ՖԱՆԹԵԶԻ)

Եգիպտոսի տասը միլիոն բնակիչներուն
եօթը միլիոնին համար գիտէ՞ք ի՞նչ է օրուան
խնդիրը. —բամպակի որդերը :

Մինչդեռ հարուստ ագարակատէրները
Եւրոպայի շուրերուն մէջ ամառը անցընելու
գացած են , իրենց ագարակներու ֆէլլահ
մշակները օրն ի բուն այս ափրիկեան տաք
արեւին տակ — առանց պլաքանութեան —
բամպակի որդեր հաւաքելու զբաղած են :

Երկու սոսկալի անիրաւութիւն մէկ գոր-
ծողութեան մէջ : Առաջին՝ ֆէլլահներուն դէմ,
երկրորդ՝ որդերուն դէմ :

Գիտունները prodaenia littoralis անու-

նը տուած են բամպակի տերեւներով մնանող
այդ որդերուն : Չեմ գիտեր թէ ի՞նչ կը նշա-
նակեն այդ լատինական բառերը, — եթէ եր-
բէք լատինական են , — բայց անշուշտ նախա-
տական անուանակոչութիւն մըն է : Հողագոր-
ծական զանազան ընկերակցութիւններ մեծ
պարգեւներ խոստացած են անոր որ այդ որ-
դերը ջնջելու միջոց գտնէ :

Արդ , ինչու՞ համար այդ տրաքունեան
հալածանքը խեղճ որդերուն դէմ : Ինչու՞ ի-
րենցմէ կապտել բամպակի տերեւներ ուտելու
իրաւունքը : Ի՞նչ ապահովութիւն ունինք թէ
բնութիւնը բամպակը չէ ստեղծած prodaenia
littoralisներու համար :

Քանի կապրիմ՝ այնչա՛փ զգուանք կը ըղ-
գամ մարդ ստեղծուելուս համար , երբ կը
տեսնեմ ու կը լսեմ իմ նմաններուս անօրի-
նակ մեծամտութիւնը և հպարտութիւնը :

Մտքերնիս գրած ենք որ ամբողջ տիե-
զերը մեզի համար ստեղծուած է : Աստուած
լուսինը ստեղծած է որպէսզի բանաստեղծները
ոտանաւոր դրելու նիւթ ունենան , ծառերը
ստեղծած է որպէսզի շուրին տակ նստինք ,
բոյսերը, բանջարեղէնները , ձուկերը , թռչուն-
ները , անասունները մեզի կերակուր ըլլալու
սահմանուած են : Պէ՛ռնարտէն տը Սէ՛ն Բի՛ռ
կը գրէ թէ բնութիւնը ծաղիկները պղտիկ թու-
փերու վրայ կը բուսցնէ որպէսզի մարդս քա-
լած ժամանակ անոնց բուրումը գիւրաւ իր
քիթն ի վեր ունենայ :

Մարդուս համար մակարոյժ մըն է այն
բոյսը որ ծառի մը վրայ սնունդը կը գտնէ
և ամէն միջոց կը գործածէ վանելու համար
զայն ծառին վրայէն, մինչդեռ խեղճը իր տա-
նը մէջ կը գտնուի հոն :

Քսաներտդ դարէն երեք տարի հեռու
գտնուած մարդկութեան մը համար ամբժէ
ափկա :

Օրինակ տունէնք միւս կենդանիներէն :
Այդուհի մը գտնուած է որ մարդս հա-
ւերուն մակարոյժը անուանէ : Գայլին մէկը
ըսած է ձեզի օր մը . — «Ոչխարին մակա-
րոյժն էք դուք :»

Եւ սակայն բացարձակապէս իրաւունք
ունին կենդանիները և բոյսերը զմեզ աշխար-
հի ամենէն մեծ մակարոյժները համարելու ,
որովհետեւ բան մը չի կայ որ չլսենք , չկըր-
ծենք չլուսենք , նոյն իսկ , գտնէ Եգիպտոսի
մէջ , ճանճերը չե՞նք կլլեր շուրին կամ խահ-
ուէին հետ :

Եւ դեռ երես ունինք prodaenia littora-
lisները դատապարտելու բամպակի տերեւներ
կրծելուն համար . . . : Ե. Օ.

Ա.ԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Քաղաքական ժողովն իւր երէկի նիստին
մէջ նկատողութեան առնելով Զակաղիկի աղ-
գայնոց հանրագիրն որով կը յայտնէին թէ
Խալոսիները ոտնձգութիւն ըրած են տեղւոյն
աղղային անպարիսպ գերեզմանատան վրայ ,
խորհրդակցութիւններ կատարեց և պարագա-
յին համեմատ հարկ եղածը տնօրինեց :

Ժողովին կը նախագահէր Առա՛շն. Տեղա-
պահ Տ. Յակոբ Ծ. Վ. Աշոտ որ յատկապէս
վերադարձած է Աղեքսանդրիայէն :

Գոհութեամբ կիմանանք թէ Աղեքսանդ-
րիոյ մէջ եւս Հայաստանի որբերու խնամա-
տարութեան համար Յանձնաժողով մը կազ-
մուեր է , մասնակցութեամբ Աբրահամ պէյ
Բարթոլի որ տարեկան 48 ոսկիի նպաստ մը
խոստացած է :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ ԳԱՇԻՐԷԻ

Պատիւ ունիմ յայտարարելու թէ՛ կրթարանիս
առաջին վերամեայ հարցարնութիւնները պիտի
կատարուին , առաջիկայ 26 Յուլիսի երկուշաբթիէն
սկսեալ ամեն օր առաւօտեան ժ. 8 1/4էն մինչեւ 11 1/2
և երեկոյեան 3 1/2էն մինչեւ 5 1/2, յատկապէս հը-
րաւիրուած Քննիչ Մասնախմբի մը հսկողութեամբ :

Հիմնադիր-Տնօրէն
Գահիրէ, 11/23 Յուլիս Ս ԲԻԻՐԱՏ

Ա. Զ. Դ

Ուսուցչուհի մը որ Պոլսոյ կաւեռ քաղի մը
բարձրագոյն վարժարաններէն միոյն մէջ պաշտօն վա-
րած է եւ երկու ամսէ ի վեր բալախ կը գտնուի, կը
փափաքի հայերէնի դասեր տալ տուներու մէջ այցե-
լուքեամբ :

Այն ծնողք որ իրենց զաւակներն օտար վարժա-
րան կը դրկեն եւ որ մայրենի լեզուն անոնց ուսու-
ցանել տալ կուզեն, առիթն կ'ընան օգտուիլ :
Դիմել ՓԱՐՈՍԻ խմբագրատունը :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Նախարարաց խորհուրդը որոշեր է եւ-
րոպացի մասնագէտ մը հրահրել՝ Գահիրէի
բժշկական վարժարանը վերակազմելու համար :

—Էլ-Թօր մաքրանոցէն առնուած լուրերը
որ և է կասկածելի դեպք չեն ծանուցաներ
այլեւս, ու Եգիպտոսի առողջապահական ընդ-
հանուր կացութիւնը դոհացուցիչ է :

—Էյ Մուայես կիմանայ թէ Եգիպտա-
կան կառավարութիւնը սկզբունքով որոշեր է
եղեր ծխախոտի մեղմաւորած անգլիական
ընկերութեան մը յանձնել : Այդ ընկերու-
թեան ներկայացուցիչը ամիսէ մը Գահիրէ պի-
տի գայ՝ երմոական խորհրդական Սըր Էրվին
Բալմըրի հետ բանակցելու համար յիշեալ մե-
ղմաւորած պայմաններուն վրայ :

—Տեղական թերթերէ ամանք զրոյց մը
յիշեր էին թէ Եգիպտոսի առողջապահական
վարչութեան, թղթատարական վերատեսչու-
թեան և մարտատան կեդրոնները Աղեքսան-
դրիայէն Գահիրէ պիտի փոխադրուին : Առա-
ջինը չի կրնար կատարուիլ՝ առանց եւրոպա-
կան տէրութեանց հաւանութեան որոնք պատ-
ուիրակներ ունին այդ վարչութեան մէջ , այդ
առաջարկը քննելու համար միջազգային յանձ-
նաժողով մը կազմուած է : Երկրորդը բոլորու-
վին անհիմն կը կարծուի : Գալով երրորդին՝
մաքսատան տնօրէնութիւնը կը խորհի այնպէս
մը կաշադարել որ մաքսադատար եկաւ տգե-
ւորներուն գոյքերը ուղղակի այստեղ քննուին,
ինչ որ մեծ դիւրութիւն պիտի բնծայէ :

—Եգիպտոսի օսմ. գովաւէր Մուսթաֆա
փաշայի կողմէ ուղղուած բողոքի մը վրայ ,
դատ բացուեր է Տօրթ, Շահնուպ պէյին , իր
եղբոր՝ Պ. Աղեքսանդրի (արտօնատէր Էյ-Սալ-
քանարի լրագրին), Ալիդ պէյ Էլ Զէնուի (անօ-
րէն Էյ-Մահրուսա լրագրին) և շէյխ Տէսուքի
Պատրի դէմ որոնք ամբաստանուած են թէ
թրքական բանակին ի նպաստ Խալոսիական Օ-
րէրային մէջ տրուած ներկայացման ինչպէս
նաեւ այդ նպատակով կազմակերպուած վի-

ճակահանութեան արդիւնքը գրականաժ Են :

—Բարիգէ կը հեռագրեն թէ Փրանսական կառավարութիւնը Պատուոյ Լէգէոնի սպայութեան աստիճանը նուիրեր է Գահիրէի խառն գատարանայ նախագահ Պ. տը Բրիւնիէուի :

—Հինգշաբթի օրը Փէլլաճ մը Իպրահիմ փաշա միլիթի մէնարէին վրայ ելլելով, ինքզինքը վար նետեց ու անձնատուան եղաւ :

—Գահիրէի եղեւնադատ ատեանը մոհուան դատարարտեց Հասան Բիւշտի անուն երիտասարդը որ «հաշարումէկ գիշերներ»ու երգեցիկ արճարանին մէջ իր հայրը սպաննած է :

—Մինչեւ երէկ առտու Վատի-Հալֆայի մէջ Նեղոսը 4 մէթրի բարձրացում մը ունեցած է . իսկ Ասուանի մէջ 7 կանգուն և 11 քըրաթ ու Ռոտտի մէջ 11 կանգուն և 5 քըրաթ :

—Տամիաթի ձկնորսներու գործադուլին հետեւանք , այդ զիւղաբաղաք պիտի միացուի Տաբայիէի գաւառի շրջանակին և ձկնորսութեան յատուկ նոր կանոնագիր մը պիտի պատրաստուի :

—Երէկ Աղեքսանդրիոյ Սիտտի-Կապէր թաղին մէջ 14 տարեկան Փէլլաճ տղայ մը արեւազարկէ մեռաւ :

—Ժանտատը հալիւ անհետացած Հնդկաւանէն , քուրան կը յաջորդէ անոր : Պոսթիլէն կը հեռագրեն թէ քուրայի զէպեր պատահեր են հոն :

—Համարչէն վերադարձող եղիպտացի ուխտաւորներուն թիւն է 3000 որոնց 1000ը օրինական բարանթիման լրացանէ՛կ ետք՝ իրենց տեղերը դադած են : Միւսները բարանթիմա կապան են :

—Զօպէյր փաշա տալի օրը պատերազմական պաշտօնատունը երթալով , Սուտանի արշաւանքին վրայ տեսակցութիւն մը ունեցաւ արշաւանքի ձիւղի տնօրէնին հետ :

—Պատիվեալ Սթրիթինկ Գլիւպի կողմէ մեզ զրկում յայտարարէ մը կը տեղեկանանք թէ յառաջիկայ ձմեռային ձիարշաւներու ստալինը տեղի պիտի ունենայ Գեկրոսիոյ 15ին և 17ին, երկրորդը՝ Յունփոր 19ին և 21ին և երրորդը՝ Փետրվար 23ին և 25ին :

ՊԵՆԵԱՆ ԹԱՏԵՐԱՌՈՒՄԲԸ

Աղեքսանդրիոյ եւրոպական թերթերը համակրութեամբ և գովեստով կը խօսին Պէնլեան խումբին վրայ որ Սան-Սթէֆանօյի քաղինօյին մէջ իր երկրորդ ներկայացումը տուաւ հինգշաբթի գիշեր :

Լեպրեպիճի Հօր Հօր Աղան մեծ յաջողութիւն գտած է Աղեքսանդրիոյ եւրոպացի հաւարակութեան մէջ և Չուհաճեանի այդ սիրուն օրէրէթը արժանաւորապէս գնահատուած է երաժշտանքներու կողմէ :

Էնիքըն Կադէթ հետեւեալը կը գրէ Պէնլեան խումբի մասին իր վերջնական թւոյն մէջ .

«Պ. Պ. Պէնլեանի տնօրէնութեան տակ գտնուած արեւելեան գուսաներգական պատուական խումբը , մոտեւաւ խնդրանք , իր երկրորդ ներկայացումը պիտի տայ այս գիշեր Սան-Սթէֆանօյի քաղինօյին մէջ :

«Ներկայացուելիք կտորն է Լեպրեպիճի Հօր Հօր, որուն հեղինակն է մահսթրօ Չուհաճեան :

«Պ. Պէնլեան պիտի կատարէ Հօր Հօրի դերը որուն սանդիլը եղած է :

«Տիկին Նուարդ՝ Փաթիլիէի դերին մէջ պարզապէս պաշտելի է :

«Լեյոն սրահ մը կակնկալուի, որովհետեւ այդ օրէրէթը շարք մըն է կատակալի միջադէպներու :»

Մի և նոյն գովեստով խօսած է նաև Ֆառ Տ'Ալեքսանտրի՝ առաջին ներկայացման առթիւ :

Հայ դերասանական խումբը իր ձմեռնային յոստիսարութիւններու փոխարէն յաջողութիւններու շարունակութիւն մը գտնելու վրայ է աշխարհիկ այդ կեդրանին մէջ :

ԹՈՒՐԲԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աւասիկ հաշտութեան կնքման նկատմամբ յաջորդաբար հասած հեռագրիները , որոնց վերջին քանի մը տեղեկութիւններն յոստատու կերելին թէ բանակցութիւնները եւրօ մը յանգեաւ մօտ են :

Կ. Պոլիս, 21 յուլիս.—Սուլթանը իրատէ մը հատարակեց որ կը վաւերացնէ թուրքահայերէնական տահմինագծին կարգադրութիւնը՝ գեապաններու առաջարկած եղանակով : Գեապաններն հրաւիրուեցան գումարման մը որ հինգշաբթի օրը տեղի պիտի ունենայ՝ հաշտութեան կնքման համար . այնուհետեւ, բանակցութիւնները երկրորդական դժուարութիւններ միայն պիտի ընծայեն , դաշնագրին խմբագրութեան և մանուալը թեալից պարպուելուն թուականին վերադարձումը :

Կրեմէ, 21 յուլիս.— Բէթիմօյի մէջ եօթը քրիստոնեայ սպաննուեցան և չորս քրիստոնեայ վիրաւորուեցան : Անգորութիւնը վերահաստատուեցաւ :

Կ. Պոլիս, 22 յուլիս.— «Թայմը» կիւմանայ Կ. Պոլսէ թէ իրատէն վերադարձումով կընդունի նոր սահմանագիծը . Գերմանական գեապանը կը պատրաստէ պատերազմական տուգանքի առաջարկները :

Կ. Պոլիս, 23 յուլիս.— Գեապանախորհուրդն ընդունեց գեապաններուն կողմէ առաջարկուած սահմանագիծը և սկսաւ վիճաւանիլ հաշտութեան նախնական պայմաններուն վրայ :

Կ. Պոլիս, 23 յուլիս.— Կը հաղորդուի թէ թուրքերը սկսած են թեալիայէն քաշուիլ : Սահմանագիծի որոշման առթիւ զիջումներ պիտի բլլան Սուլթանին , քանի մը կարեւոր կիրճերու մասին :

* * *

Այս առտու Հալլասի հեռագիր մը կը հաստատէ և կը մանրամասնէ սոյն լուրերը :

Գեապաններուն և Թէփիզ փաշայի միջեւ համաձայնութիւն հաստատուած է՝ սահմանագծերու որոշման վերաբերեալ նախնական պայմաններու խմբագրութեան ձեւին վրայ : Տէրութիւնը քանի մը բարեփոխումներ ընդունեցին՝ ռազմագիտական տեսակէտով :

Գեապանները կը գումարուին այսօր շաբունակելու համար հաշտութեան կնքման նախնական պայմաններուն խմբագրութիւնը Կը հաւատեն թէ թուրքերը սկսած են թեալիայէն քաշուիլ :

Պ. Տիգրան Երկաթ , որ ծանօթ է Փրանսական մէկ բանի կարեւոր հանգանքու մէջ իր հրատարակած ուսումնասիրութիւններովը հայկական գրականութեան և խնդրին վրայ, վերջերս Աթէնք գացած է՝ Բարիգի և Պրիւսիի մէկ բանի թերթերու իրրեւ թղթակից :

«Հայոց նպատամատուց ժրնէփական մասնախումբի տեղեկագրին երկրորդ մասը որ կը վերաբերի որբերու խնդրին , պիտի հրատարակենք յաջորդ թուով :

ԻՆՉ ԵՂԱԻ 350 ՈՍԿԻ ԱՐԴԻԻՆՔԸ

Անցեալ իրիկուն մեր տղան իր գրքերու և տետրակներու ծրարը շարկած դպրոցէն տուն եկաւ՝ սովորականէն աւելի զուարթ , ինչու որ տարեկան արձակուրդը սկսած էր :

—Հապա քննութիւն :
—Այս տարի քննութիւն պիտի չըլլայ , հայրիկ :

Վարժապետական անհարկի քննութիւններէն յետոյ աշակերտներու տարեկան հարցաքննութեան զանց առնուելուն գաղտնիքը մեր պզտիկ ուղեղին մէջ չի սեղմեցաւ չիտակը :

Սակայն մեր դպրոցը վարդ անձերը ուրոնցմէ կապատուի այս գաղտնիքին բացատրութիւնը , պարտաւոր էին գիտնալ գո՛նէսա երկու տարրական բաները . 1.—Ուսանողները ամբողջ տարուան մը մէջ իրենց առած դասերը մէկ ամսուան մէջ քաջութեամբ կըրկենելով՝ հիմնապէս կը սպաւորեն զանոնք իրենց մաքին մէջ և կ'ըրացունեն . ահա՛ այս է է՛ն մեծ օգտակարութիւնը տարեկան հարցաքննութեան՝ որու զանցառութեամբ բարոյ յապէս կը տուժեն աշակերտները : 2.—Վարժարանի պաշտօնեաներուն մէկ տարուան մէջ վճարուած է մօտաւորապէս 350 ոսկիի գումար մը որու փոխարէն վարժապետներու տուած աշխատութիւնը և արդիւնքը պէտք էր ստուգուէին տարեկան հարցաքննութեան մէջ . արդ՝ քանի որ տեղի չունեցան հարցաքննութիւնը , իրաւացի չէ՞ հարցունել թէ՛ ի՞նչ եղաւ 350 ոսկիի արդիւնքը :

Գահիրէ, 18 Յուլիս 1897 ՀԱՅՐ ՄԸ

ՄԻՇՐԱՆ ԿԻՐՃԵԱՆ

ՀԱՅ ԴԵՐՁԱԿ

ՇԱՐԱԱ ԱՊՏ-ԷԼ-ԱՁԻԶ

Կը պատրաստէ բնիք հասակով եւ չափաւոր գրեթով հագուստներ արանց հաւաք :

ԱՐԵՒԻՆ ՏԱԿ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

Քանի մը եօթնեալ տառով , չափով օր մը , եկեղեցւոյ մօտ նեղ փողոցի մը մէջ մեզ հանդիպեցաւ : Ես ու ընկերս չէնք ճանչնար զինքը : Հալիւ տառնով տարեկան արտադրի մը , քաջառողջ , զուարթ , բարեգէմ : Բայց զոյն , թեթեւ տափառ մը , ուղղակի շտապիկ մը , շատ մարուր , լոյն եզրերով յարդէ թեթեւ զխաւի մը , ահա՛ բոլոր արդուգարդը : Բոկոտն է . ձեռքը տեսակ մը դոյլ :

Ժպտելով ինձ կը մօտենայ և վաղեմի ծանօթի մը պէս կը բարեւէ , կը հասկնամ . սխալ ճանաչու գովութիւն մը , կամ առ տառերն ժողովուած դէմք մը : Սիրուն չափակրատութեամբ մը կը սկսի խօսիլ . կը թողում որ ընէ , քանի որ շատ ուրախ է զմեզ տեսնելուն համար : Խառնափար անմարդու աշխարհարար մը . հոգ չէ : Հարցումներ իր կողմանէ մեր քաղաքի գաղուն թուականին ու եղանակին վրայ . գոհացուցիչ պատասխաններ մեր կողմանէ :

Թերեւս շատերն ալ ինձ պէս են . երբ ան

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԷԳՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱՉՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում արժեթուղթերու.—
Կանխավճար արժեթուղթերու վրայ.— Կստան-
ձնէ յաճախորդներու հաշւոյն համար դան-
ձումներ ընել եգիպտոսի և արտասահմանի
գլխաւոր քաղաքներու մէջ.— Պայմանաժամա-
ւոր վաճառում ամեն տեսակ պարգեւաւոր
արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դի-
մել Պուլք փողոց եգիպտական հեռագրատան դէմ
Բէսմազովու դրամատունը:

ՀՐԱՆՏ ԱՋԱՏԵԱՆ ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօղպէից, Պիւլպիւլեանի օթէլին քովըն-
տի կամարակալ փողոցը բացած խանութին
մէջ ամենէն դժուարահաճները գոհացնելու
եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սո-
վորական գիներով:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՓ

ՃԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՍՏԱՆԳՐՈՅ ԳԻԾ

Կ Ա Ց Ա Ր Ա Ն Ք	խառն 1,2,3,4գ.	օմնիպ. 1,2,3,4գ.	կէս ուղ. 1,2,3,4գ.	օմնիպ. 1,2,3,4գ.	էքսպրէս 1, 2 կգ.	օմնիպ. 1,2,3,4գ.	էքսպրէս 1, 2 կգ.	օմնիպիւս 1 2 3 կարգ	
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա)	ժամ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
»)	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	էքսպրէս 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՍՏԱՆԳՐՈՅԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Ց Ա Ր Ա Ն Ք		օմնիպ. 1,2,3,4գ.	կէս ուղ. 1,2,3,4գ.	օմնիպ. 1,2,3,4գ.	էքսպրէս 1 2 կգ.	խառն	օմնիպ. 1,2,3,4գ.	էքսպրէս 1 2 կրգ.	օմնիպիւս 1 2 3 կարգ	
		առտ.	առտ.	առտ.	առտ.	առտ.	երեկ.	երեկ.	երեկ.	երեկ.
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	երեկ. 12 14	4 13	5 15	8 6	առտ. 1 9
Թանթա)	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ.	7 18	9 59	երեկ. 12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷՆ-ՍԻԻԷՉ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷՉ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ			ԿԱՅԱՐԱՆՔ		
ԱՌԱՒՈՑ	ԵՐԵԿՈՅ		ԱՌԱՒՈՑ	ԵՐԵԿՈՅ	
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա)	ժամ. 12 28	7 48	» կայարան	» —	3 30
»)	մեկ. 12 33	7 53	Իսմաիլիա	» 1 20	7 5
Զակաղիկ)	ժամ. 1 34	8 54	Զակաղիկ)	ժամ. 3 7	8 53
»)	մեկ. 1 44	9 4	»)	մեկ. 3 17	9 3
Իսմաիլիա	մեկ. 3 40	1 —	Պէնհա)	ժամ. 4 13	9 47
Սիւէզ կայարան	ժամ. —	5 —	»)	մեկ. 4 17	9 4
Տօք (բարափ)	ժամ. 6 55	—	Գահիրէ	ժամ. 5 5	10 35

ծանօթ մը պատահի ինձ և իբրեւ ծանօթի սկսի
խօսիլ, չեմ համարձակիր, կամ առ առաւելն շատ
ուշ միայն կը համարձակիմ խոստովանիլ թէ զինքը
ճանչնալու պատիւը չունիմ: Ուրեմն խօսակցութիւնը
կը շարունակէ չէնք շնորհք, մինչեւ այն վայրկեանը
յորում խօսակիցս որ, հին բարեկամ մը օտար քա-
ղաքի մը մէջ տեսնելու հաճոյքին անձնատուր, ու-
շաքրութիւն չէր դարձուցած յայտնապէս անխնամ
իւր արդուգարգին գործելիք տպաւորութեան,
կայծակի արագութիւն ունեցող նայուածք մը ար-
ձակելէն յետոյ դէպ իւր ոտքերուն կողմը, կը շա-
րունակէ ժպտով մը որուն մէջ աղի արցունք մը
կը նշմարեմ:

«Ամբողջ ձեռք մը մաքուր հագուստ ունիմ,
բայց վաղը կը հագնիմ, այսօր գործի օր է»:

— Ի՞նչ կընես:

— Եկեղեցին, ասղին անդին, ջուր կը կրեմ:

— Մինա՞կ ես:

— Մայրս մէկտեղ է:

— Անունդ ի՞նչ է:

— Զե՞ս յիշեր:

Այս միջոցին կերելի թէ խօսակցիս, թերեւս
հասկնալով որ զինքը շատ լաւ չեմ ճանչնար.

— Հրամանդ Երուսաղէմ ֆարժալեանը չե՞ս,
թուարանութեան դասաւանդիս:

— Այո... ոչ... գրեթէ... նոյն վարժա-
րաններու մէջ պաշտօնակից եղած ենք. բայց ես
թուարանութեան դաս չեմ տուած: Բայց հոգ չէ,
կարելի է որ զբեղ շատ անգամ տեսած եմ ու չեմ
յիշեր:

Եւ խօսակցութիւնը քիչ մ'ալ կը շարունակէ
ու կը բաժնունինք իրարմէ, նա իւր դոյլը ջրով լե-
ցունելու, ես ալ սիրտս՝ դառն խորհուրդներով ու յի-
շատանքներով:

Խեղճ տղայ, խեղճ տղայ, որ կը ջանայ, իւր
մասին իւր վաղեմի ուսուցչին մխիթարութիւն ստալ,
հաւատարմով անոր թէ կիրակի օրերը կօշիկներ ունի
հագնելու և վերարկու մը ծածկուելու: Խեղճ տղոր-
մելի պատանի որ հազիւ դարձնէ ելած կամ գուցէ
դարձնէ ելելու ժամանակ չունեցած՝ տարօրինակ
պարագաներէ կը նետուի օտար կլիմայի մը տակ,
կանուխ կանուխ մատնուած գոյութեան չարչարանք-
ներուն, կանուխ կանուխ ինկած այն անյաղ վիշտ-
պին ատամներուն տակ, զոր կեանքի պէտքերը կը
կոչենք:

Եւ քանի՞նք կան իրեն պէս, հէք անոք, ան-
խնամ, նոյն իսկ դիւրակեցիկ վիճակէ մը յանկարծ
գահավիժած աղեմիկ թշուառութեան մը գիրկը,
հայրերու գիրկէն, որ գային վաղադրաւ, դառն
որբութեան ու ցուրտ միայնութեան մութ անապա-
տին մէջ: Քանի՞նք օտար պէս տարածում հայրեր
դարձած, քանի՞ քանի եղուկ պատանիներ, որ բռն
ունին թերեւս վշտերէ հիւանդկալ մօր մը, զոր
գուրգուրանքով կը սիրեն և զոր պիտի ջանան
զերծ պահել կարօտութեան ճանկերէն: Ամենքն
ալ ժամանակէն առաջ լուրջ դարձած և տարածում
զգացած կենաց դառնութիւնները, առանց ժամա-
նակ ունեցած ըլլալու հասկնալ թէ ինչպէս պա-
տահեցաւ այս ամենը, թէ ուր կերթան, թէ ինչ
պիտի ըլլան:

Յ. ՍԵԹԵԱՆ

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, ստամոքսի, մոր-
թի եւ ջղային հիւանդութեանց: Կ'ընդունի իրեն
դիմող հիւանդները Մեզոն Զահար, Շեքիբէ Զօրեի
հիւր դէմք. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12
եւ կէս օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբաթ
ձեռք կը դարձանով:

ԲԻԻԶԱՆԴ ՓԱՓԱԶԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին ծանուցանել արդոյ հա-
սարակութեան թէ Պաղար Մուրուրի մէջ
խանութ մը բացած են ուր ընտիր տեսակէ
և ծեծուած խահվէ պիտի ծախուի սովորա-
կան գներով:

Այս խանութին մէջ կան նաեւ զովա-
ցուցիչ ըմպելիներ:

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի